Տեղեկացում՝ «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» գործարար համաժողովի մասնակցության վերաբերյալ

2019 թվականի մայիսի 11-ին Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում կայանալու է «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» տնտեսական գործարար համաժողովը, որի նպատակն է համախմբել ծնունդով Գեղարքունիքի մարզից Հայաստանում և արտերկրում բնակվող գործարարներին՝ մարզում ներդրումներ կատարելու, սոցիալ-տնտեսական բնույթի ծրագրեր իրականացնելու, աշխատատեղեր ստեղծելու համար: Մարզի համայնքներում ներդրումային ծրագրեր կյանքի կոչելու համար, խնդրվում է մարզի բնակիչներին՝ իրենց կողմից մշակված իրատեսական և նպատակային գաղափարները ներկայացնել Գեղարքունիքի մարզպետարան՝ այն համապատասխանեցնելով ներդրումային ծրագիր-առաջարկի ձևաչափին (տես նույն բաժնում): Ներկայացված ծրագրերը Գեղարքունիքի մարզպետարանում ստեղծված հանձնաժողովի կողմից քննարկվելու և հավանության արժանանալու դեպքում կներկայացվեն գործարար համաժողովի օրակարգում:

Հարցերի կամ դիմումների համար կապվել՝ Գեղարքունիքի մարզպետարան, Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին, բաժնի պետ՝ Վարդուհի Մնացականյան:

Հեռախոս՝ +374 60 65 06 27, +374 94 70 57 21

Էլ փոստ՝ gegharquniq.tsragrer@mta.gov.am, vard.m@mail.ru